ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

11-ը հունվարի 2024թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-01

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1.-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ մրցութային խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել մրցութային խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
Մրցութային խորհրդի
2024թ. հունվարի 11-ի
թիվ ՄԽ-Ո-01 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) գործունեության կազմակերպման և լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով և սույն աշխատակարգով:

2. Խորհրդի կազմակերպական աշխատանքների իրականացումն ապահովում է Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ նաև՝ Աշխատակազմ):

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Խորհուրդը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

1) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

2) սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

3) համադրում է թեկնածուի համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին (փաստաթղթերի գնահատման փուլ).

4) փաստաթղթերի գնահատման փուլի արդյունքում ընտրում է հարցազրույցի փուլ անցած թեկնածուների.

5) հարցազրույցի փուլի անցկացման նպատակով սահմանում է՝

ա. թեկնածուի՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած հարցարանը (այսուհետ՝ Հարցարան),

բ. Հանձնաժողովի անդամի թեկնածուին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը,

գ. առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների,

դ. գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները,

ե. չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում,

զ. գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

6) հարցազրույցի փուլի ավարտից հետո կազմում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը.

7) մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը, ինչպես նաև մրցույթի արդյունքներին վերաբերող հարցերի կապակցությամբ ընդունում է որոշումներ:

4. Խորհուրդն իր նիստերը հրավիրում է Ազգային ժողովի նստավայրում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար, բացառությամբ թեկնածուի ընտրության նիստի:

5. Խորհրդի անդամները Խորհրդի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են էլեկտրոնային հաղորդագրությամբ, իսկ դրա անհնարինության կամ արտահերթ նիստերի դեպքում՝ հեռախոսազանգի միջոցով, ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

6. Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության մասնակցության դեպքում: Նիստը վարում է Խորհրդի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

7. Խորհրդի նիստի սկզբում իրավազորության ապահովման դեպքում նիստը նախագահողը հայտարարում է նիստը բացված: Նիստի իրավազորության՝

1) ապահովման դեպքում նիստը նախագահողը Խորհրդի անդամներին տեղեկացնում է նիստն սկսվելու մասին.

2) չապահովման դեպքում Խորհրդի նիստը համարվում է չկայացած:

8. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

9. Խորհրդի նիստերը անցկացվում են դռնփակ, եթե Խորհուրդը նիստերը դռնբաց անցկացնելու մասին որոշում չի կայացնում: Խորհրդի որոշումները հրապարակվում են Ազգային ժողովի կայքում:

10. Խորհրդի հերթական և արտահերթ նիստերի օրակարգի նախագիծը կազմում և Խորհրդին է ներկայացնում Աշխատակազմը:

11. Խորհրդի հերթական նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի քննարկմանն է ներկայացնում նիստը նախագահողը, իսկ արտահերթ նիստերի օրակարգը՝ այդ նիստերը նախաձեռնողները:

12. Արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնող(ներ)ի սահմանած օրակարգով և ժամկետներում:

13. Խորհրդի արտահերթ նիստ գումարելու մասին Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությունն իրականացվում է Խորհրդին ուղղված

գրությամբ, որտեղ նշվում են արտահերթ նիստի օրակարգը և անցկացման ժամկետը: Գրությանը կցվում են օրակարգային հարցերի նախագծերը:

14. Խորհրդի նիստում հարցերը քննարկվում են սույն աշխատակարգին համապատասխան:

15. Հարցեր տալու կամ ելույթ ունենալու համար Խորհրդի անդամները դիմում են նիստը նախագահողին: Հարցերը տրվում են, ինչպես նաև ելույթ ունեցողները հանդես են գալիս ըստ դիմելու հաջորդականության, նիստը նախագահողի հայտարարությամբ:

16. Հարցի քննարկման ընթացքում՝

1) զեկուցումների համար հատկացվում է մինչև տասնական րոպե.

2) հարցերի, դրանց պատասխանելու, ինչպես նաև արձագանքելու համար հատկացվում է մինչև երկուական րոպե.

3) ելույթների համար հատկացվում է մինչև հնգական րոպե:

17. Հարցի քննարկումը կարող է ընդմիջվել նիստը նախագահողի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ: Առաջարկը քվեարկության է դրվում առանց քննարկման: Եթե հարցի քննարկումն ընդմիջվել է, ապա սահմանված ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից ընդմիջվել էր:

18. Քվեարկությունն իրականացվում է ձեռք բարձրացնելու միջոցով: Խորհրդի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ: Քվեարկության ընթացքում ձայները հաշվում է նիստը նախագահողը:

19. Խորհրդի նիստն արձանագրվում է: Արձանագրության քաղվածքը ստորագրում է նիստը նախագահողը և արձանագրողը:

20. Խորհուրդը «Կոռուպցիայի կախարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ Հանձնաժողովի անդամների պաշտոնում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և թեկնածուների ցուցակը երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ցուցակին կից ներկայացվում են Խորհրդի նիստերի արձանագրությունները և որոշումները, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը: